ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ

ԱՐՏԱՇԱՏԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ
ԹԻՎ 5 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ
ՀՈԱԿ

ք.Արտաշատ, փ. Շիրվանզադե , 17/1

Հեռ. (0235) 2-65-61

N 24

19.11. 2019թ

«Այգեվանի ալրաղաց «ՍՊԸ – Ի
տնօրեն Ռ. Ղազանչյանին

Հարգելի տիկին Ռ.Ղազանչյան

"Արտաշատ քաղաքի թիվ 5 մանկապարտեզ "ՀՈԱԿ-ի և "Այգեվանի ալրաղաց" ՍՊԸ –ի միջև 08 հունվար 2019 թվականին կնքվել է **ԱՐՏՔ5Մ-ԳՀԱՊՁԲ-19/01** ծածկագրով պայմանագիր, ըստ որի "Այգեվանի ալրաղաց" ՍՊԸ –ն պարտավորվել է իրականացնել սննդամթերքի / հացի/ մատակարարում :
Պայմանագրի ընդհանուր գումարը կազմում է 1722000 /մեկ միլիոն յոթ հարյուր քսաներկու հազար / ՀՀ դրամ ներառյալ ԱԱՀ:
Պայմանագրի կատարման փուլում դիտվել են հացի մատակարաման ուշացման, հացի որակի անհամապատասխանության բազմաթիվ խախտումներ, ուղեկցող փաստաթղթերի բացակայություն, որոնց կապակցությամբ բանավոր բազմաթիվ զգուշացումներ են արվել:
18.11.2019 թ "Այգեվանի ալրաղաց" ՍՊԸ –ն ընդհանրապես չի իրականացրել հացի մատակակարում , որի արդյունքում խաթարվել են մանկապարտեզի բնականոն աշխատանքը:
18.11.2019 թ "Այգեվանի ալրաղաց" ՍՊԸ –ին ուղարկվել է ծանուցում պահանջելով պարզաբանել հացի չմատակարարաման պատճառները, սակայն "Այգևանի ալրաղաց" ՍՊԸ-ն չի պարզաբանել դրանք:
19.11.2019 թվականին "Այգեվանի ալրաղաց" ՍՊԸ առանց հանձման-ընդունման արձանագրության և ուղեկցող փաստաթղթի իրականացրել է հացի մատակարարում, որը չի ընդունվել «Արտաշատ քաղաքի թիվ 5 մանկապարտեզ» ՀՈԱԿ –ի կողմից, կազմվել է արձանագրություն վերոհիշյալ խախտման վերաբերյալ:
"Այգեվանի ալրաղաց" ՍՊԸ –ն բազմաթիվ անգամ խախտել է պայմանագրի 1.1 կետը :
«Արտաշատ քաղաքի թիվ 5 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի և "Այգեվանի ալրաղաց" ՍՊԸ –ի միջև 08 հունվար 2019 թ կնքված **«ԱՐՏՔ5Մ-ԳՀԱՊՁԲ-19/01»** ծածկագրով պայմանագրի 8.11 կետով միակոմանի լուծել պայմանագիրը:
Միաժամանակ տեղեկացվում է, որ «Արտաշատ քաղաքի թիվ 5 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ին ներկայացված պայմանագրի կատարման ապահովումը՝ տուժանքի մասին համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը ներկայացվելու է համապատասխան բանկին՝ «Արտաշատ քաղաքի թիվ 5 մանկապարտեզ» ՀՈԱԿ –ի հաշվեհամարին փոխանցելու նպատակով:
Ի հայտ են եկել «Գնումների մասի» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի ա) պարբերության հանգամանքներ, ըստ որի գրություն է ուղարկվելու ՀՀ ֆինանսների նախարարություն "Այգեվանի ալրաղաց" ՍՊԸ –ին գնումների մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվելու նպատակով:

Տնօրեն Շ.Մարգարյան

Կատ. Փ.Հակոբյան

Հեռ. 077-89-91-94